ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2026

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդա՛ յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող ես դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարելի է օգտագործել սևագրության համար:

Ուշադի՛ր եղիր պատասխանների ձևաթուղթը լրացնելիս.

- ընտրովի պատասխանով առաջադրանքներում քո ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դի՛ր X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ),
- 33-38-րդ և 67-69-րդ առաջադրանքներում՝ յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան համարների տակ, դի՛ր X նշաններ:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում տրված տառը:**

1) դյուր-նկալ, խոյ-նթաց, որոտ-նդոստ, հոտ-նկայս –*ը*
2) շո-եքարշ, պատարա-, երկարաձի-, գո-նոց –*զ*
3) ըն-երակա, բր-ուճ, գմբեթար-, ար-ուկ –*դ*
4) այծենակա-, բա-կոն, բողբո-ել, ճղ-իմ –*ճ*

2 **Ո՞ր շարքում ուղղագրական սխալ կա:**

1) ապաշխարել, մաղթել, դափնեվարդ, հանդիպակաց
2) վառոդ, դշխո, բարյացակամ, բանբեր
3) պայուսակ, թպրտալ, անհարկի, փտախտ
4) կմախք, գաղջ, խորխորատ, ճրագալույծ

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում անջատ:**

1) ըստ(ամենայնի), տարեց(տարի), սրբություն(սրբոց)
2) ուս(ուսի), ի(լրումն), առ(այն)
3) դեմ(հանդիման), լրիվ(օրյա), մեծ(մասամբ)
4) առ(միշտ), մի(երկու), սերնդից(սերունդ)

4 **Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:**

1) ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱ, ՆՅՈՒ ՅՈՐՔ, ԱՌԱՋԻՆ ՀԱՅՔ, ԿԱՐՊԱՏՅԱՆ ԼԵՌՆԵՐ
2) ՎԵՐԻՆ ԴՎԻՆ, ՀԱՐԱՎԱՖՐԻԿՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱ, ՄԵԾ ՊԱՐՆԻ
3) ԹՈՄ ՍՈՅԵՐ, ԱՇՈՏ Գ ՈՂՈՐՄԱԾ, ԼԱ ՄԱՆՇ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ
4) ԼԵՈՆԱՐԴՈ ԴԱ ՎԻՆՉԻ, ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈ, ԼԵՌՆԱՅԻՆ ԿԻԼԻԿԻԱ, ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿ

5 **Ո՞ր շարքում գաղտնավանկ ունեցող բառ կա:**

1) խաղընկեր, ցանցկեն, դյուցազն
2) համրանալ, ինքնիշխան, լուսնէջք
3) հյուսնություն, անընտգյուտ, քաղցրահունչ
4) բեկյալ, ոճրագործ, կապտել

6 **Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ կա:**

1) Ժայռը նիրհելով ունկնդրում է ամպերի շրշյունը, և կանաչ դաշտում արածում է մի աստղազարդ ձի:
2) Նրան թվում էր, թե շատ բախտավոր կլինի այդ աղջկա հետ, բայց այդպես չեղավ:
3) Այդ հանճարեղ մարդու կողմից գրված թանկագին ձեռագիրը մեզ է հասել հազարամյա պատմության խորքերից:
4) Նախորդ դարերում այսուայնտեղ առկայծած որմնանկարչությունը փթթեց Տաթևում և Անիի տաճարներում:

7 **Ո՞ր շարքի բոլոր բառերի արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ -*ակ* վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի:**

1) ձնագունդ, ազդ, աղյուս, որդի
2) լեզվաբան, ինչքան, ավազ, դիտահոր
3) հարթ, մամուլ, հեծելագունդ, մեղրածոր
4) կոզի, նախադուռ, հաջող, ալեծուփ

8 **Ո՞ր շարքի բոլոր բառերում մեկից ավելի ածանց կա:**

1) վերավաճառք, ստորադասական, ճախորդություն, տախտակամած
2) սննդամթերք, նամականի, համերկրացի, արտահանում
3) սառցակալում, անփառունակ, առաջնակարգ, թռչնաբույծ
4) վարչակազմ, ներբեռնում, հարաբերական, խորհրդատվություն

9 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հոմանիշներից:**

1) խորշակ-հողմ, եղերերգ-օրհներգ
2) կառափ-բռունցք, ակնածանք-պատկառանք
3) գողտրիկ-գեղեցիկ, ունայն-փուչ
4) բարձրաբերձ-երկնահուպ, վեհանձն-վեհերոտ

10 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են անհոդակապ:**

1) նրբերանգ, գառնարած, աղեկտուր
2) առաջընթաց, մսաղաց, ձյունառատ
3) զօրուգիշեր, մոտակա, շաքարավազ
4) լեռնաշխարհ, գյուղեգյուղ, ագեվազ

11 **Ո՞ր տարբերակում բառի սխալ բացատրություն *չկա:***

1) **երախայրիք**–առաջին պտուղ, **արտևանունք**–հոնք
2) **բրուտ**–կավագործ վարպետ, **կերոն**–խունկ ծխելու աման
3) **ապաթարց**–տառի վերևից դրվող նշան, **բամբիռ**–եռալար երաժշտական գործիք
4) **սնանկ**–նյութական միջոցներից զուրկ, **բանուկ**–միայն հետիոտների համար նախատեսված

12 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ան* հոլովման:**

1) մանուկ, սառցալեռ, ուղեբեռ
2) քաղաքաղուռ, հայցադիմում, երդում
3) հեռագրասյուն, գարուն, ծագում
4) ձգտում, շնաձուկ, անուն

13 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են անորոշ դերբայներ:**

1) սկսել, գրվել, հեռանալ, եկել
2) տեսնել, նայել, խաղալ, զարգանալ
3) սիրել, հագցրել, հմայվել, աղալ
4) սրբել, ջարդվել, կոխկռտել, փախել

14 **Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ *չկա:***

1) քարայրեր, ուղեծրեր, սկիզբեր, հանցապարտներ
2) փայտահատներ, անցագիրներ, վերնախավեր, գինեգործներ
3) կարգախոսներ, սրբավայրեր, հանքափորներ, երկնաքերեր
4) տոնածառեր, տիկիններ, մենապարեր, սանրեր

15 **Ո՞ր նախադասության մեջ ենթադրական եղանակի բայաձև *չկա:***

1) Եգիպտական բուրգերը փոշի կդառնան, Արևի պես, երկի՛ր իմ, կվառվես վառման:
2) Ուր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր:
3) Մարգարեներ են բոլոր հասկերը, Հասկը չի քնում. անքուն է հասկը:
4) Չենք հանդիպի մենք արդեն, Նվա՛ղդ, Թեև բացվում են նորից վարդեր:

16 **Ո՞ր նախադասությունն է համառոտ:**

1) Երանի ինձ մոռանար:
2) Փաստը հավանաբար անտեսված էր:
3) Թղթին հանձնեց մտքերը:
4) Այնտեղ կարողացավ ներանձնանալ:

17 **Փակագծերում տրված բառերի ձևափոխության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

Չինական առածում …….. .«Հնարավոր ……. ՝ մարդ համեստ ……. առանց իմաստության, սակայն հնարավոր չէ, որ իմաստուն լինի առանց ……. »:

(ասել, եմ, լինել, համեստություն)

1) ասվում է, է, լինի, համեստության
2) ասում էին, էր, լինի, համեստություն
3) ասված է, է, լինելով, համեստություն
4) ասում էին, էր, լինի, համեստություն

18 **Ո՞ր նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**



1) Երբ դասաժամը վերջացավ, աշակերտները պիտի ցրվեին, ընկերս, որ շատ երգ սիրող էր, խնդրեց ուսուցչին, որ աշակերտները մի երգ երգեն:
2) Հենց գյուղից դուրս եկանք ու մտանք մարգագետին, այն թռչունը դարձյալ եկավ ու սկսեց թրևել ու գետնին զարնվել մեր ոտքերի տակ:
3) Նա թեև պատասխանեց ծերունուն, բայց և անմիջապես զգաց, որ դա իսկական պատասխան չէր, և ծերունու արձագանքը նկատելի հուզեց նրան և անչափ մտահոգեց:
4) Երբ կինը հանկարծ տխրում էր, երիտասարդը նրան սրտապնդելու համար ջանում էր վստահ ու վճռական տեսք ընդունել, սակայն դա նրան միշտ չէր հաջողվում, և երբեմն ինքն էլ էր հուզվում՝ չդիմանալով լարումին:

19 **Ո՞ր նախադասության մեջ դերբայով արտահայտված ենթակա *չկա:***

1) Մոր լցված աչքը որդու գալուն է, Շեմքի քարին է զրկված հարկի:
2) Եվ բավական է, հասկացե՛ք ընդմիշտ, Որ Աստծուն նույնիսկ հայհոյողները Շատ ավելի են գերադասելի:
3) Բայց և՛ կրակն է պատրանք, Ե՛վ փնտրելն է անտեղի:
4) Ստվերները խեղդվում են շոգից, Բարդիները մրսում են, Մեր տանը մեռածներն են, հոգի՛ս, Ապրողները դրսում են:

20 **Ո՞ր նախադասության մեջ վերաբերության անուղղակի խնդիր կա:**

1) Ձիապանի կանչն ինձ հիշեցրեց, որ ժամանակն է հրաժեշտ տալու:
2) Նրա գլխում բերդի պատմությունն էր, մագաղաթյա մատյաններում գրած խոսքերը՝ իշխանական օրերի մասին:
3) Հենց այդ օրից էլ գլխին կարմիր շոր կապած աղջիկը իմ աչքում դարձավ այն կետը, որի շուրջ պտտվում էր իմ ներքին աշխարհը:
4) Փայտերը մեկ-մեկ գցում էր կրակի մեջ և խոսում շահի ժամանակներից:

21 **Ո՞ր նախադասության մեջ բուք պիտի դրվի:**

1) Տվյալ իրավիճակում լռելը նշանակում էր ուղղակի ընդունել սեփական պարտությունը:
2) Արագածի բարձունքից զբոսաշրջիկների առջև բացված տեսարանը հիասքանչ էր անկրկնելի ու եզակի:
3) Առավոտյան երբ թանձր աղջամուղջը տեղի էր տալիս ծառերի ճյուղերի արանքից թափանցող արևի շողերին ձյան սպիտակաթույր սփռոցի վրա լերդացած արյան շիթեր էին երևում:
4) Արարատ լեռան հավերժական ձյունով ծածկված գագաթին էր ուղղված անծանոթի կարոտակեզ հայացքը:

22 **Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում տեքստի տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Քաղաքի հրապարակում մարդկանց հոծ բազմություն էր հավաքվել: Բոլորն ուզում էին տեսնել օդապարիկ կոչվող այդ հրաշքը, որը շուրջ 15 մ տրամագծով քաթանե գունդ էր՝ լցված տաք ծխով: Արտաքինից սոսնձված էր թղթով:
2. Մոնգոլֆիե եղբայրները հավաքվածներին առաջարկեցին թռչել օդապարիկով: Բայց թռչել ցանկացողներ այդպես էլ չեղան:
3. Ստորին մասում անցք էր բացված, որի անմիջապես տակը կախված էր «կրակարան»: «Կրակարանի» մեջ եղբայրները դրել էին շիկացած ածխի կտորներ՝ տաքացնելու համար օդապարիկի ներսի օդը: Երբ կտրեցին պարանը, որով օդապարիկը կապված էր սյունին, այն վեր բարձրացավ և շուտով ծածկվեց ամպերի հետևում:
4. Ավելի քան 200 տարի առաջ ֆրանսիական փոքրիկ Անոնե քաղաքը հանկարծ հայտնի դարձավ ամբողջ աշխարհում: Ժոզեֆ և Էտյեն Մոնգոլֆիե եղբայրները օդ բարձրացրին իրենց կառուցած օդապարիկը:

1) 4, 3, 1, 2
2) 1, 2, 4, 3
3) 1, 4, 2, 3
4) 4, 1, 3, 2

23 **Ո՞ր տարբերակը տեղադրելու դեպքում քերականորեն և տրամաբանորեն ճիշտ նախադասություն կստացվի:**

Հինգերորդ օրվա վերջում՝ ……., նա հաշվեց, որ նավը դեռ յոթ մղոն հեռու էր իրենից, և ինքն անկարող էր հասնել նրան:

1) ինքն իրեն հավաքելով
2) ուշ երեկոյան
3) ծովի ալիքների մեջ օրորվելով
4) օվկիանոսի ալիքների մեջ

24 **Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը *չի* գործածվել:**

Հետզհետե մթնում էր երեկոն,
Ամեհի գոռում էր ծովը.
Եվ ես, ափին նստած, դիտում էի
Սպիտակ պարը ալիքների.
Իմ կուրծքն ուռչում էր ծովի նման,
Ու ես զգացի քո կարոտն անհուն:

1) մակդիր
2) հանգավորում
3) շրջադասություն
4) փոխաբերություն

25 **Ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:**

Կ՚ըլլան մարդիկ, որ լացող մը չ՚ունին,
Անոր համար Նա դրրավ այդ լուսին.
Եվ մահամերձն ալ կ՚ուզե երկու բան,
Նախ՝կյա՜նքը, վերջը՝լացող մ՚իր վրրան:

1) Պ. Դուրյան. «Իմ ցավը»
2) Մ. Մեծարենց. «Արևին»
3) Պ. Դուրյան. «Տրտունջք»
4) Մ. Մեծարենց. «Վայրկյան»

26 **Գ. Զոհրապի ո՞ր նովելից է տրված հատվածը:**

«Այս զավակները՝ իր բոլոր երջանկությունը, հիմա կը ճնշեին զինքը իրենց 14-15 տարու աղջկան անմեղության ժպիտովը, որ հանդիմանությունով լեցուն կ՚երևար իր հայրական աչքին»:

1) «Այինկա»
2) «Ճիտին պարտքը»
3) «Փոստա՛լ»
4) «Այրին»

27 **Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի ո՞ր հերոսի խոսքն է.**

«…Անոնք, որ գիրքով կը զբաղին, թշվառությամբ կը զբաղին: Հառաջադիմությունը կը պոռանք և ետ ետ կերթանք, լույս կը պոռանք և դեպի խավար կերթանք, …ապագա կ'ըսենք և դեպի անցյալը կը վազենք»:

1) խմբագրի
2) քահանայի
3) բանաստեղծի
4) դասատուի

28 **Վարդան Այգեկցու առակների աղբյուրների վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:**

1) Առակների մի մասը ինքն է հորինել:
2) Որոշ առակներ վերցված են հայ ժողովրդական բանահյուսությունից:
3) Իբրև աղբյուր՝ օգտագործել է Եզոպոսի առակներից:
4) Առակների հիմնական մասի աղբյուրը Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն» է:

29 **Որ հատվածը Հ. Թումանյանի ո՞ր ստեղծագործությունից է. լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ:**

1. «Անուշ»
2. «Թմկաբերդի առումը»
3. «Փարվանա»

ա. Անց է կենում դարձյալ տարին:
Նայում է կույսն ամեն օր,
Ոչ մի սարից, ոչ մի ճամփին
Չի երևում ձիավոր:

բ. Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թռած իրար են գալիս,
Գալիս, կարոտով մի հեղ համբուրվում
Աշխարհից հեռու, լազուր կամարում:

գ. Բաց արավ ցերեկն իր աչքը պայծառ
Աշխարհքի վրա, Ջավախքի վրա,
Ավերակ բերդին, սև ամպի նման,
Ծուխն ու թշնամին չոքել են ահա:

1) 1-գ, 2-բ, 3-ա
2) 1-գ, 2-ա, 3-բ
3) 1-բ, 2-գ, 3-ա
4) 1-բ, 2-ա, 3-գ

30 **Ե. Չարենցի ո՞ր ստեղծագործությունից է հետևյալ հատվածը:**

Եվ արդյոք ո՞վ է երազել այդքան դաժան –
Ու լուսավոր առավոտները իմ հոգու,
Ո՞վ դարձրեց-մի անկրակ իրիկնաժամ,
Ու գորշ պարան, ու երկնուղեշ փայտեր երկու:

1) «Մահվան տեսիլ»
2) «Վահագն»
3) «Դանթեական առասպել»
4) «Անվերնագիր»

31 **Ա. Բակունցի «Խոնարհ աղջիկը» պատմվածքի ստորև բերված սյուժետային դրվագներից որո՞ւմ սխալ կա:**

1) Ուսուցչի՝ գյուղից հեռանալու օրը Խոնարհը աշակերտների հետ եկել էր դպրոցի բակ՝ ուսուցչին հրաժեշտ տալու:
2) Հեղինակ-հերոսը՝ 17-18 տարեկան մի երիտասարդ՝ բանտից նոր դուրս եկած, իր բարեկամի առաջարկով գնում է Ձորագյուղ և զբաղվում ուսուցչությամբ:
3) Ուսուցիչը Խոնարհին առաջին անգամ տեսնում է անտառի բացատում:
4) Բարեկենդանի օրը ուսուցիչը Խոնարհին տեսնում է աղջիկների հետ իրենց դիմացի տան կտուրի վրա ձյունով խաղալիս:

32 **Դ. Դեմիրճյանի «Վարդանանք»-ում ի՞նչ է պատասխանում Վարդան Մամիկոնյանը Աթլի այն հարցին, թե արդյոք հոների համար Հայաստանի վրայով կա ճանապարհ դեպի Բյուզանդիոն:**

1) Հոների համար դեպի Բյուզանդիոն տանող ճանապարհը համարում է մշտապես բաց, եթե նրանք դաշինք կնքեն հայերի հետ՝ ընդդեմ պարսից սպասվող պատերազմի:
2) Ասում է, որ ճանապարհ կա, բայց վերադարձ չկա՝ ակնարկելով Աթլի՝ իր հետևից թողած սովը:
3) Նկատելով բյուզանդացի զորավար Անատոլի ներկայությունը՝ հրաժարվում է ճանապարհ տրամադրել՝ խուսափելով Բյուզանդիայի հետ առանց այն էլ բարդ հարաբերությունների հետագա վատթարացումից:
4) Սիրով խոստանում է ճանապարհ՝ առաջարկելով հայոց ջերմ ընդունելությունն ու աջակցությունը:

33 **Ո՞ր բառերում արմատի հնչյունափոխություն կա:**

1. վերնախավ, 2. աղավնյակ, 3. պտղամիս, 4. միութենական, 5. ցրտահար, 6. քննչական, 7. հոգատար, 8. պարտիզպան

34 **Ո՞ր բառերն են հոմանիշ *մոլեգնել* բառին:**

1. զեղել, 2. քամահրել, 3. սարսափել, 4. բարկանալ, 5. սահմռկել, 6. նզովել, 7. բորբոքվել, 8. կատաղել

35 **Ո՞ր տարբերակներում է նախադասության ընդգծված անդամի պաշտոնը ճիշտ նշված:**

1. Այդ մարդը, որ հակված էր բյուզանդական կայսեր հետ բարեկամական դաշինք **<u>կնքելուն</u>**, հիմա խոր տարակուսանքի մեջ էր: *(հանգման խնդիր)*
2. Ես անտառում էի. որոտում էին երկինք ու երկիր, ամպերը քարի **<u>ծանրությամբ</u>** կախվել էին գլխիս: *(ձևի պարագա)*
3. Արագիլը բույնը դիտելուց հետո գնաց կանգնեց կնոջ զարկված տեղի վրա՝ **<u>ճահճում</u>**, երկար կանգնեց: *(տեղի պարագա)*
4. Եվ աստծուն լսելի եղան Խայամի տրտունջն ու **<u>հանդիմանությունը</u>**: *(ենթակա)*
5. Իշխանը ձին ասպանդակեց ու արագ հեռացավ **<u>քաղաքից</u>**: *(անջատման անուղղակի խնդիր)*

36 **Տրվածներից որո՞նք են բաղադրյալ դիմավոր ձևեր:**

1. ուտում-խմում են, 2. պիտի վեր կենամ, 3. չեմ երգի, 4. շուռ կգաս, 5. մի՛ մոռացիր, 6. պետք է դուրս գանք, 7. գալու է, 8. լաց մի՛ եղիր

37 **Ո՞ր նախադասություններում ձևի պարագա կա:**

1. Համր քայլերով դարերն են անցնում, Արտույտը երգում է իր գովքը գարնան:
2. Խոր լռության մեջ ականջին հասավ խուլ հառաչի մի ձայն, և երևաց, որ նրա մտահոգված դեմքը պայծառացավ:
3. Երեկոները մենք հաճախ էինք հավաքվում, սիրով պատմում մեր անցյալից, երգում էինք թախծոտ և ուրախ երգեր, արտասվում:
4. Պատերից յուրաքանչյուրը բաժանվում էր չորս կամարամասի՝ յուրաքանչյուրում հինգական զույգ որմնասյուներով՝ հաստատված ամուր պատվանդանի վրա:
5. Կիզող արեգակի առաջ մեր միտքը հալչում է, ցնդում անձրևի կաթիլի նման:
6. Հատակից քար ես հանում. Մաքուր է այնքան, Քարից բուրմունք ես առնում Կարմրախայտ ձկան:

38 **Ո՞ր նախադասություններում կետադրական որևէ նշան *չպիտի* դրվի:**

1. Հայաստանի երրորդ մայրաքաղաք Երվանդաշատը արտաքին վտանգներից զերծ պահելու նպատակով Երվանդը Արաքսի ձախ ափին կառուցում է նաև թիկնապահներով ու սպասավորներով բնակեցված դաստակերտ:
2. Հեգնական ժպիտը շրթունքներին Ավետը նայում էր տնօրենին ու սպասում նրա հրամաններին:
3. Արձանագրությունը կազմելուց ու չորս հոգով ստորագրելուց հետո նրանք անմիջապես վերադարձան գրասենյակ և շարունակեցին կիսատ թողած գործը:
4. Արուսի հայացքը կանգ առավ Ռուբենի վերնաշապկի սպիտակ թելով կարված սև կոճակին:
5. Կարծես ինքը կանգնած էր բորբոքված խարույկի մոտ և իր այտերն այրվում ու այրվում էին ներքին ջերմությունից:

39 **Բառերից քանիսո՞ւմ կրկնակ բաղաձայն կա:**

տա-երք, ու-ակի, եր-ենցաղ, մ-կաշունչ, հո-երգություն, հո-եկ, անդո-ագիր, վազքու-ի

40 **Բառերից քանի՞սն են կազմությամբ պարզ:**

ձեռք, ուժգին, բանուկ, գուշակ, եղունգ, նաժիշտ, դատարկ, արձան

41 **Նախադասություններից քանիսո՞ւմ է ընդգծվածը կապ:**

- Ո՞վ կմտածեր, թե մի քանի ժամ <u>անց</u> զեփյուռը պիտի փոխվեր մոլեգին փոթորկի:
- Մուշեղը <u>իբրև</u> բրոնզե արձան ձուլվել էր ամեհի երիվարին:
- Վերջին դարերում նախարարական հին տների <u>փոխարեն</u> երևան եկան մելիքներ:
- Հասկանալի էր, որ <u>նման</u> պայմաններում ես չէի կարող հանգիստ զբաղվել իմ գործով:
- Փողոցի ծայրից ես մի անգամ էլ <u>հետ</u> նայեցի:

42 **Շարքերից քանիսո՞ւմ են բոլոր դերանունները միևնույն տեսակի:**

- սույն, մյուս, այնտեղ, սրանք
- ես, դու, ինքը, մեզ
- բոլորը, յուրաքանչյուր ոք, ամենքը, ողջ
- ինչ-որ, երբևէ, այլ, մեկը
- այսպես, այդպիսի, որպիսի, նույնպիսի

43 **Նախադասության անդամներից քանիսի՞ շարահյուսական պաշտոնն է սխալ տրված:**

Ցերեկները զբոսնելուց հետո նա տուն էր վերադառնում բարձր տրամադրությամբ. ժայռերի շիկացած լանջերից իջնող զեփյուռը շոյում էր նրա գրգռված նյարդերը և պարգևում հոգեկան անդորր:

- **ցերեկները** – ժամանակի պարագա
- **տրամադրությամբ** – միջոցի անուղղակի խնդիր
- **իջնող** – որոշիչ
- **հոգեկան** – որոշիչ
- **նրա** – հատկացուցիչ
- **նյարդերը** – ենթակա

44 **Հատվածներից քանիսի՞ դիմաց է ճիշտ նշված, թե որ հայերենով է այն:**

- Ընդ եղեգան փող ծո՛ւխ ելանէր, Ընդ եղեգան փող բո՛ց ելանէր, Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ:- *գրաբար*
- Յետ այսօրիկ ապստամբեաց ի թագաւորին հայոց եւ ձեռին իշխանութեանն տանն հայոց թագավորին: - *միջին հայերեն*
- Զիմ եարն ամանաթ կու տամ, ի վարդին մէջըն պահեցեք, Թե երթամ խարիպուկ մեռնիմ, վարդըն ձեզ, զտէրն յիշեցեք:- *միջին հայերեն*
- Ես ինքզինքս չէի կարծեր այնչափ մեծ մարդ, որչափ որ կը կարծե այս խմբագիրն, բայց հարկավ ան ինձմե աղեկ գիտե իմ որչափ մեծ ըլլալս: - *արևմտահայերեն*
- Էն լեզվներումը նրանք կարդում էին երևելի մարդկանց գործերքը, նրանց արածներն ու ասածները:- *արևելահայերեն*

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. ***Ե*** խոնարհման բոլոր կանոնավոր պարզ բայերի վաղակատարը ձևով նման է անորոշին:
2. Ենթակայականը, հարակատարը և համակատարը անկախ դերբայներ են::
3. Բոլոր ձևաբայերը սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակաձևեր են կազմում:
4. Ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակների ժխտականը կազմվում է դրական ձևերին ***չ*** մասնիկ հավելելով:
5. Սոսկածանցավոր կանոնավոր բայերի անցյալ կատարյալի վերջավորությունները տարբերվում են մյուս կանոնավոր բայերի համապատասխան վերջավորություններից:
6. Պատճառական ածանց ունեցող բայերը եզակի հրամայականում ստանում են ***ու*** վերջավորություն:

Բ մակարդակ

46 **Համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:**

Ծառաները, միմ-նց(1) հրմշտելով, երբեմն սայթա-ելով(2), կ-կտուր(3) բառեր փոխանակելով, շփեր-(4) շարժումներով ներսուդուրս էին անում: Սանդու-քի(5) առաջ կանգ էին առնում կա-քեր(6)՝ բերելով կարծես ու-տի(7) եկող ազգականներին՝ կեղծ վշտակ-ության(8) արտահայտությունը դեմքներին: Ներս մտավ մոտ վա-ուն(9) տարեկան մի մարդ՝ ա-համարհական(10) ժպիտը դեմքին:

1) 2-կ, 4-թ, 7-խ, 10-ր
2) 3-ծ, 5-ղ, 8-ց, 9-թս
3) 1-յա, 4-թ, 6-ռ, 10-ր
4) 1-յա, 2-կ, 5-ղ, 9-թս

47 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գաղտնավանկի *ը*-ն ճիշտ տեղադրված:**

1) սպ(ը)ղդել, խառ(ը)նվածք
2) առ(ը)նչվել, ձեռ(ը)նտու
3) գտ(ը)նվել, մկ(ը)նդեղ
4) ճնշ(ը)վել, հանգց(ը)նել

48 **Ո՞ր շարքում *ի* ձայնավորի սղում ունեցող բառ *չկա:***

1) տարեմուտ, մտավախություն, մարդկային, նշաձող
2) վշտակից, չվերթ, թվական, մշտադալար
3) լսարան, մրգահյութ, սրտակից, պատրանք
4) ձգողական, կրավորական, ալեծուփ, հետնադուռ

49 **Ո՞ր տարբերակի դարձվածքները միմյանց հոմանիշ *չեն:***

1) դեմքը կորցնել-դիմակը պատռվել
2) օձիքը բռնել-բկին չոքել
3) մատից հոտ քաշել-սիրտը վկայել
4) ձեռք բռնել-մատից փուշ հանել

50 **Տրված իմաստներից որը ո՞ր բառի բացատրությունն է. լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ:**

ա. մուշկ
բ. կթղա
գ. կղմինդր
դ. վիհ
ե. խոյակ

1. մեծ խորությամբ երկարաձիգ փոս
2. քանդակազարդ սյունագլուխ
3. գինու թաս
4. բուրավետ յուղային նյութ

1) ա-3, բ-2, գ-4, ե-1
2) ա-3, բ-1, դ-4, ե-2
3) ա-4, բ-3, դ-1, ե-2
4) ա-4, գ-2, դ-3, ե-1

51 **Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են կազմված հականիշներից:**

1) տարտամ-որոշակի, աչառու-կողմնակալ, չոր-տամուկ
2) ներհակ-իրարամերժ, մեկնարկ-վերջնակետ, խակ-հասուն
3) ժիր-հեղգ, ճապաղ-սեղմ, անհարթ-ողորկ
4) արգասավոր-անպտուղ, զուսպ-ժուժկալ, վտիտ-գիրուկ

52 **Ո՞ր տարբերակի նախադասություններում ընդգծված բառերը համանուններ *չեն:***

1) Եթե նա այս անգամ էլ **ստեր**, հայրն արդեն չէր ների: - Քեզնից **ստեր** շատ եմ լսել և եթե անկեղծ լինեմ, հոգնել եմ:
2) Չին **անարգել** թռավ վերջին ճողապատնեշի վրայով:-Իշխանին **անարգել** ու անցնել անպատիժ նա չէր կարող:
3) Նա համառորեն դեն էր **հրում** ուտելիքը: - Չարաճճի ալիքները **հրում** էին իրար ու մի վայրկյանում անհետանում:
4) Նվագարանին նոր **լարեր** էին հարկավոր: -Պետք էր սպասել այնքան, մինչև նա հիմնովին **լարեր** ջութակը:

53 **Ո՞ր նախադասության մեջ մակբայ *չկա:***

1) Վաղ մանկությունից զրկվելով ծնողներից՝ Արսենը մնաց միայնակ, մնաց որբ՝ երբեմն-երբեմն արժանանալով հարևանների կարեկցանքին:
2) Խարխուլ աստիճաններով իջավ ներքև, մի քանի րոպե անիմաստ քայլեց բակում ու մոտեցավ մառանի դռանը:
3) Ինչպե՞ս եղավ, որ աշխարհը այսպես փոխվեց, ո՞ւր գնացին այն օրերը, երբ սնդուկում զրնգում էր ոսկին:
4) Սառն է գետի ջուրը, բարձր սարից է գալիս, ուր միշտ մռայլ ամպ կա, ամպի տակ՝ սառույցի հաստ շերտեր:

54 **Ո՞ր տարբերակում նախադասության անդամի ձևաբանական վերլուծության սխալ *չկա:***

Այդ լռին ու ինքնամփոփ մարդը երբեք իր հայրական սերը չէր արտահայտում սովորական գուրգուրանքով, սակայն նայելով նրա մռայլ դեմքին՝ ես զգացի՝ որքան խոր է նրա վիշտը:

1) **խոր** – ածական, դրական աստիճան, **սերը** – այլաձև հոլովման գոյական
2) **չէր արտահայտում** – անկատար անցյալ, **երբեք** – անորոշ դերանուն
3) **նայելով** – անորոշ դերբայ, ներգործական սեռ, **սակայն** – համադասական շաղկապ
4) **որքան** – հարաբերական դերանուն, **նրա** – սեռական հոլով

55 **Ո՞ր տարբերակում ներկա ժամանակի բայաձև կա:**

1) Ես ամուր առողջություն ունեմ և կարող եմ առանց հոգնելու մինչև լույս աշխատել:
2) Եկեք այսօր մենք համբուրենք որդիաբար Մեզ աշխարհում ծնած-սնած Այս ձեռքերը:
3) Ինչպես եղավ, որ մի անգամ Արջն ու օձը դարձան ընկեր:
4) Գիշեր է իջել. լռել են բոլոր Աղմուկները չար, խոսքերը պատիր:

56 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են արտահայտում նյութական իմաստ:**

1) ինչպիսի, որպեսզի, մենություն, անել
2) փոխանակում, վերստին, ոչինչ, որևէ
3) խշխշոց, ուր, գուցե, քառորդ
4) ծալովի, անհեթեթ, գյուտ, հանուն

57 **Ո՞ր շարքում թվական *չկա:***

1) տասնյակ, միակ, երիցս
2) հարյուրամյա, միլիոնավոր, իննուկես
3) հնգակի, այդքան, մեկ չորրորդ
4) քանի, քառապատիկ, յոթական

58 **Ո՞ր նախադասության մեջ ստացական հոդ ունեցող բառ *չկա:***

1) Չարենցը ինձ հիշեցրեց 1908 թվականին իրեն հասցրած ապտակիս մասին:
2) Երեխաներս սովոր էինք կիսամութ սենյակում դաս սովորելուն:
3) Պատանին կանգնեց դիմացս ու առանց աչք թարթելու նայեց ինձ:
4) Երգերդ աղբյուր են զուլալ՝ Մեր երկրի արևից բխած:

59 **Ո՞ր նախադասության ընդգծված բառն է որոշիչ:**

1) Ես կույր եմ հիմա, անբախտ ու մենակ, Հավերժում կորած մի <u>**մոլոր**</u> ասուպ:
2) <u>**Մեղմ**</u> ու սիրագին ժպտում էր նա ինձ Օտար կողմերում, այն ճամփի վրա:
3) <u>**Դժկամ**</u> նայում են ժայռերը խոժոռ, Տխուր խաղում են ալիքները ժիր:
4) Ես կգամ, երբ դու կլինես <u>**տրտում**</u>, Երբ երազներդ հավետ կմեռնեն:

60 **Ո՞ր նախադասության մեջ ներգործող խնդիր կա:**

1) Ես ինձնից գոհ եմ, որովհետև ահա երեկվա գյուղացի՝ հիմա լրիվ ազատված եմ հովիվ դառնալու և հոդացավից նվալու վտանգից:
2) Ի՞նչ է պահանջվում գյուղի ղեկավարությունից. պահանջվում է, որ թույլ տան ձի պահել:
3) Տեսնելով կրկեսում վալս պարող այդ ձիուն՝ ես զգացի, որ ինձ համար թանկ է բեռնաձին, որ մշտապես քրքրվում է բոռերից:
4) Ես մտնում եմ որձաքարերից շինված եկեղեցու բաց դռնով, որի փեղկի վրա կան նախշեր՝ ժամանակի ընթացքում տեղ-տեղ խունացած:

61 **Ո՞ր տարբերակում անուղղակի խնդիր ստորադաս նախադասություն *չկա:***

1) Այդ իշխաններից շատերը հակառակ էին, որ Աշոտ Երկաթը ամուսնանար քեզ հետ, թագուհի՛ս:
2) Ձմեռները քաղաքի աշխույժն ավելանում էր նրանով, որ թագավորն իր ամբողջ արքունիքով տեղափոխվում էր Դվին:
3) Այո՛, խորհի՛ր նրանց շուրջ, մտածի՛ր նրանց մասին, ում լափում է ճանճրույթը:
4) Կատարվեց այն, ինչին սպասում էին արդեն մի քանի օր:

62 **Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:**

1) *Նրա զրույցներից մեկի նյութը մեր հարուստներից շատերի անճաշակ հագնվելն էր:*
   Նրա զրույցներից մեկի նյութն էր այն, որ մեր հարուստներից շատերը անճաշակ են հագնվում:
2) *Նվագախմբի ձայնը երկրաշարժի տպավորություն թողեց գորիսեցիներից հատկապես Շենում ապրողների վրա:*
   Նվագախմբի ձայնը երկրաշարժի տպավորություն թողեց գորիսեցիներից հատկապես նրանց վրա, ովքեր Շենում էին ապրում:
3) *Նա հետաքրքրվում էր ոչ միայն Սայաթ-Նովայով, այլև նրանից առաջ ու հետո ապրած քիչ հայտնի աշուղներով:*
   Նա հետաքրքրվում էր ոչ միայն Սայաթ-Նովայով, այլև քիչ հայտնի աշուղներով, որ ապրել էին նրանից առաջ ու հետո:
4) *Սարերից իջնում էին հազարավոր քոչվորներ՝ իրենց խաշնարածության բարիքներով հեղեղելու Գորիսի մեծ տոնավաճառը:*
   Սարերից իջնում էին հազարավոր քոչվորներ, որպեսզի իրենց խաշնարածության բարիքներով հեղեղեն Գորիսի մեծ տոնավաճառը:

63 **Ո՞ր տարբերակում անենթակա նախադասություն կա:**

1) Երբ ծառը բողբոջել է ուզում, Ոչնչով նրան չես խանգարի:
2) Պտուղդ քաղող չկա, մասրենի՛, սարի մասրենի՛:
3) Երկնի՛ր, իմ երկի՛ր, հավատով անմար, Սուրբ է քո ուղին, և պսակդ՝ վեհ:
4) Ապրե՜լ, ապրե՜լ, այնպե՜ս ապրել, Որ սուրբ հողդ երբեք չզգա քո ավելորդ ծանրությունը:

64 **Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:**

1) Բաժակը, որ արդեն մոտեցրել էր շուրթերին, դրեց սեղանին և դիմեց մեզ անհանգիստ ու հուզված:
2) Նա լայնաբերան կճուճը վերցրեց աղջկանից, նայեց նրա ներսը և շուռ տալով դրեց որսկանի գլխին:
3) Մտածեցի՝ նամակը տիկին Արաքսյայից է (ես նրան նամակ էի գրել) ու հապշտապ բացեցի նկարազարդ ծրարը, որ կարդամ գրությունը:
4) Կատերինան, որ վրդովված էր և խիստ հոգնած, և որին արդեն ճանձրացրել էր խնջույքը, իսկույն ընդհատեց նրան:

65 **Ո՞ր պնդումն է ճիշտ Հ. Մաթևոսյանի «Աշնան արև» վիպակի վերաբերյալ:**

1) Աղունի հայրը օգնում է իր դստերը, որ նա ու Սիմոնը նոր տուն կառուցեն ու առանձին ապրեն:
2) Աղունը միշտ նշում է, որ թեև ինքը մայր չի ունեցել, բայց մայրացուն իրեն մեծացրել ու խնամել է հարազատի նման:
3) Աղունը ցավով է նշում, որ իր որդի Արմենակը ժառանգել է ոչ թե իր հայր Իշխանի, այլ սկեսրայր Աբելի խառնվածքը:
4) Աղունը անսովոր էր մեծ ընտանիքում ապրելուն, քանի որ հայրական տանը ինքն ընտանիքի միակ զավակն էր:

66 **Ո՞ր բանաստեղծության հեղինակն է Հ. Սահյանը:**

1) «Օրը մթնեց»
2) «Ռավեննայում»
3) «Վարք մեծաց»
4) «Կարուսել»

67 **Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը կամ *չեն* բխում նրանից:**

Գրերի բազմաթիվ տեսակներից ամենահինը պատկերագիրն է: Մարդիկ ժայռի կամ քարի վրա նկարում էին որևէ կենդանի, առարկա հենց այդ կենդանու կամ առարկայի իմաստով: Օրինակ, եթե նկարում էին այծ, ապա դա հենց այծ էլ նշանակում էր:

Պատկերագրերից հետո մարդիկ անցան գաղափարագրերին: Այն արդեն մի քայլ առաջ էր պատկերագրից: Նրա նշանները նույնպես պատկերներ էին, բայց գաղափարագրերի տվյալ պատկերը կարող էր ունենալ մի քանի նշանակություն:

Պատկերագրերն ու գաղափարագրերը հնչյունական գիր չէին, այսինքն՝ որևէ լեզվի բառեր չէին արտահայտում: Կարելի է հասկանալ այդ գրերի իմաստը, բայց հնարավոր չէ իմանալ, թե ինչպես են հնչել այդ գրերով նշանակված բառերը:

Հնչյունական ամենահին գիրը սեպագիրն է: Այս գիրը կոչվում է սեպագիր, քանի որ կազմված է սեպաձև նշաններից: Սեպագիրը, սակայն, տարբերվում է սովորական այբբենական գրից: Այն հնչյունական է համարվում այնքանով, որքանով որ, երբ վերծանում ենք հին սեպագրերը, իմանում ենք նաև, թե ինչպես են հնչել այն լեզվի բառերը, որով գրված են տվյալ սեպագրերը: Սակայն դրանք որոշ դեպքերում մեկ հնչյունի են փոխարինում, որոշ դեպքերում՝ մեկ վանկային միավորի: Սեպագրերում կան նաև, այսպես կոչված, որոշիչներ: Վերջինները ցույց են տալիս տվյալ բառի ինչ լինելը՝ երկիր, քաղաք, գետ կամ նմանատիպ այլ բան:

Առաջին սեպագիր արձանագրությունները վերաբերում են մ.թ.ա. 4-րդ հազարամյակի երկրորդ կեսին Հյուսիսային Միջագետքի շրջանում բնակվող շումերական քաղաքակրթությանը:

Մ.թ.ա. 2800 թ.-ից սեպագիրն սկսել է օգտագործվել Հայաստանում՝ Արարատյան թագավորությունում կամ Ուրարտուում: Դրանք հայ թագավորները գրել են տվել դաշնակից խուռիների լեզվով (թեման շինարարական աշխատանքներն էին կամ իրենց տարած հաղթանակները):

Առաջին մարդը, որ ուշադրություն է դարձրել Հայաստանում գտնվող սեպագիր արձանագրություններին, Մովսես Խորենացին է:

1. Սեպագրերում կան նշաններ, որոնք, ըստ անհրաժեշտության, մատնանշում են տվյալ գրվածքի՝ աշխարհագրական ինչ օբյեկտի անվանում լինելը:
2. Սեպագիրը հնչյունական գիր է, քանի որ բոլոր արձանագրություններում յուրաքանչյուր սեպագիր նշան համապատասխանում է մեկ հնչյունի:
3. Ի տարբերություն պատկերագրերի՝ գաղափարագրերը կարող են արտահայտել մեկից ավելի իմաստներ:
4. Մեզ հասած սեպագիր արձանագրությունները կա՛մ շումերների լեզվով են, կա՛մ խուռիների:
5. Հայաստանի տարածքում սեպագրերը առաջին անգամ սկսել են գործածվել Մովսես Խորենացու ժամանակներից:

68 **Ո՞ր նախադասություններում պատճառական բայ կա:**

1. Եվ արբած կյանքի անուշ գաղտնիքով՝ Ողջույն կտամ ես ջրին ու հողին:
2. Նրան իր հոր տանը պահել մեծացրել էին ինչպես արքայական բուրաստանի գողտրիկ շուշան:
3. Եգերացիները ուռենու դալար ճյուղերով կապկպում էին գերանները և լաստեր կազմելով՝ իջեցնում գետը:
4. Մի քանի կետերում հապճեպորեն քարաբեկորներ կուտակել տվեցին, որոնցով պետք է հարվածեին զորքին:
5. Տխուր ամպերը կամար են կապել, Հիվանդ է սիրտս. փայփայեցե՛ք ինձ:
6. Ոսկի հայացքով կախարդել է նա, Այլ սիրով լցրել հոգիս վշտակիր:

69 **Ո՞ր նախադասություններում ուղիղ խնդիր կա:**

1. Քամին հալածում է մառախուղի թանձր քուլաները:
2. Մառախուղի փեշերից վեր են խոյանում պղնձագույն ժայռերի հինավուրց գագաթները:
3. Քարափոր տների երդիկներից կապույտ ծուխը ձգվում է դեպի վեր և լիզում խոնավ ժայռերը:
4. Գարնան մթնկա գիշերներին ջրի վշշոցը ահարկու սարսափ է սփռում գետափի տներում, ձորերում:
5. Մթության մեջ առկայծող աստղերը կախարդական կանթեղներ են թվում:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել *Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:**

1. Միևնույն բառի մեջ երկու նախածանց չեն կարող կողք կողքի գտնվել:
2. Հայերենում վերջածանցներն ավելի շատ են, քան նախածանցները:
3. Վերջավորությունները փոխում են բառի իմաստը և նոր բառ կազմում:
4. Բառերում ածանցից առաջ ընկած մասը կոչվում է հիմք:
5. Հայերենում բառերի քերականական ձևափոխությունները կատարվում են միայն բառի վերջից վերջավորություններ ավելացնելով:
6. ***Իկ, ք*** մասնիկները որոշ դեպքերում հոգնակերտներ են, որոշ դեպքերում՝ ածանցներ: